ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 14.06.2018թ.

Ժամը 11[00]

Մասնակցում էին՝ **գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ , գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. ՈՒստյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության սպա, մայոր Ս. Նիկոլյան:
Գնումների համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Գ. Հակոբյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Հակոբյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Հակոբյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
2	«Լիմուշ» ՍՊԸ
3	«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Հակոբյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի և «Լիմուշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՇՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) և գնահատվել են բավարար, իսկ «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն. մասնավորապես՝ «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի համապատասխան, տնօրեն է հանդիսանում Վրեժ Մարկոսյանը, սակայն ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատվել են Լյուդվիգ Հարոյանի կողմից, ընդ որում բացակայում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը: Հաշվի առնելով վերոգրյալը, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը 18.06.18թ.-ին որոշեց, մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ն չի շտկել անհամապատասխանությունը (ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել): ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Հակոբյան)

3.1 Սույն ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չ/Մ	Քանակ	Նախահաշվային ընդհանուր գին	Մրցույթին մասնակցող կազմակերպություններ			1-ին տեղ զբաղեցրած մասնակից
					անվանումը	գինը առանց ԱԱՀ	գինը ԱԱՀ-ով	
1	(«Հայ Զինվոր» ամսագրի հրատարակման ծառայություն	հատ	98200	18805300	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ	15613800	18736560	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
					«Լիմուշ» ՍՊԸ	25206300	29047560	
					«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ	18820030	22584036	

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՇՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Հակոբյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ 21.06.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Հակոբյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող	Վ. Գասպարյան
Գնահատող	Կ. Պողոսյան
Գնահատող	Գ. Ռիստյան
Գնահատող	Ա. Մաղաքյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնումները համակարգող՝	Գ. Հակոբյան